

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության հանձնաժողովի

2011 թվականի դեկտեմբերի 9-ի

թիվ 874 որոշմամբ



**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

ՄՄ ՏԿ 015/2011

Հացահատիկի անվտանգության մասին

Նախաբան

1. «Հացահատիկի անվտանգության մասին» Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) մշակվել է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրին համապատասխան:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում կիրառման եւ կատարման համար պարտադիր՝ հացահատիկին ներկայացվող միասնական պահանջներ սահմանելու, Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող հացահատիկի ազատ տեղափոխումն ապահովելու նպատակով:

3. Եթե հացահատիկի մասով ընդունվել են Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգեր, որոնցով սահմանվում են պահանջներ հացահատիկի նկատմամբ, ապա հացահատիկը պետք է համապատասխանի Մաքսային միության բոլոր այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա:

Հոդված 1. Կիրառության ոլորտ

1. Սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող հացահատիկի վրա, որն օգտագործվում է սննդային կամ կերային նպատակներով:

Սույն Տեխնիկական կանոնակարգը չի տարածվում սերմնային նպատակների համար նախատեսված հացահատիկի, հացահատիկի վերամշակման արտադրանքի վրա:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են Մաքսային միության միասնական մաքսային տարածքում կիրառման եւ կատարման համար պարտադիր՝ հացահատիկին ներկայացվող պահանջները եւ դրանց հետ կապված արտադրման, պահպանման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող պահանջները՝ մարդու կյանքն ու առողջությունը, գույքը, շրջակա միջավայրը, կենդանիների եւ բույսերի կյանքն ու առողջությունը պաշտպանելու, ինչպես նաեւ հացահատիկի սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունները կանխելու նպատակով:

3. Հացահատիկի նույնականացումն իրականացվում է ապրանքաուղեկից փաստաթղթերում նշված տեղեկատվության հիման վրա, մշակաբույսի տվյալ տեսակին բնորոշ հացահատիկի մակնշման, բուսաբանական հատկանիշների ակնադիտական զննման, ինչպես նաեւ սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին հավելվածում նշված տարբերակիչ հատկանիշների համաձայն:

Այն դեպքում, երբ հացահատիկը հնարավոր չէ նույնականացնել ապրանքաուղեկից փաստաթղթերում նշված տեղեկատվության հիման վրա, ըստ մակնշման եւ ակնադիտական զննման, նույնականացումն իրականացնում են անալիտիկ մեթոդով՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածում նշված ստանդարտներին համապատասխան հացահատիկի ֆիզիկաքիմիական ցուցանիշների համապատասխանության ստուգման միջոցով:

Հոդված 2. Սահմանումները

Սույն Տեխնիկական կանոնակարգում օգտագործվում են հետեւյալ եզրույթները եւ դրանց սահմանումները.

հացահատիկի խոնավություն՝ հացահատիկի հյուսվածքներում ֆիզիկաքիմիական եւ մեխանիկական կապված ջուր, որն անջատվում է որոշման ստանդարտ մեթոդներով,

վնասակար խառնուկ՝ բուսական ծագման խառնուկ, որը թույլատրելի մակարդակները գերազանցող քանակությունների դեպքում կարող է ունենալ թունավոր, վնասակար, վնասող կամ վտանգավոր ազդեցություն մարդու եւ (կամ) կենդանիների եւ (կամ) բույսերի առողջության վրա,

հացահատիկը շրջանառության մեջ դնելը՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում հացահատիկի առքուվաճառքը, ինչպես նաեւ դրա փոխանցման այլ եղանակներ՝ սկսած արտադրողից կամ ներմուծողից,

գենետիկորեն ձեւափոխված (տրանսգենային) օրգանիզմներ՝ գենային ինժեներիայի մեթոդների օգտագործմամբ ստացված օրգանիզմներ,

մրկոտ հատիկ՝ հատիկ, որն ամբողջությամբ կամ մասամբ աղտոտված է մրկի սպորներով,

հացահատիկի աղտոտվածությունը վնասատուներով՝ միջհատիկային տարածությունում մեռած վնասատուների կամ դրանց մասերի, ինչպես նաեւ դրանց կենսագործունեության արգասիքի առկայություն,

հացահատիկի վարակվածությունը վնասատուներով՝ միջհատիկային տարածությունում կամ առանձին հատիկների մեջ կենդանի վնասատուների առկայություն՝ դրանց զարգացման ցանկացած փուլում,

հացահատիկ՝ հացահատիկային, հացահատիկալոռային եւ յուղատու մշակաբույսերի պտուղներ, որոնք օգտագործվում են սննդային եւ կերային նպատակներով,

հացահատիկի նույնականացում՝ հացահատիկը սույն Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտներին դասելու ընթացակարգ,

կերային նպատակներ՝ հացահատիկի օգտագործումը որպես կենդանիների կեր եւ համակցված կերերի արտադրության համար,

հացահատիկի վնասատու միջատներ՝ հացահատիկային փայտաբզեզ, հացի փայտաբզեզ, շտեմարանային երկարակնճիթ բզեզ, բրնձի երկարակնճիթ բզեզ, հրաթիթեռներ, շտեմարանային ցեց, տրոգոդերմա փոփոխական, մավրիտանյան բզեզիկ, գորգի բզեզ, կապրյան բզեզ [*Trogoderma granarium*], ալրաբզեզներ, քորոցաբեղիկ փոքր մթերաբզեզ, ձեւացնողներ, կաշեկերներ, ալրակերներ, սնկակերներ, փայլաբզեզներ, ծածկաբզեզներ, ծածկակեր բզեզներ, խարակերներ, հատիկակերներ, տերեւաղլորներ,

հացահատիկի վարակազերծում՝ հացահատիկի վրա քիմիական, ճառագայթային կամ ֆիզիկական ազդեցություն՝ վնասատուների եւ միկրոօրգանիզմների ոչնչացման նպատակով,

հացահատիկի մշակում՝ հացահատիկի մաքրում եւ (կամ) չորացում, եւ (կամ) վարակազերծում՝ դրա անվտանգությունն ապահովելու նպատակով,

հացահատիկի մաքրում՝ խառնուկների հեռացում՝ հացահատիկի անվտանգությունն ապահովելու նպատակով,

հացահատիկի խմբաքանակ՝ միեւնույն անվանման (տեսակի), ըստ որակի համասեռ հացահատիկի քանակություն, որը նախատեսված է միաժամանակյա ընդունման, առաքման եւ (կամ) պահման համար,

հացահատիկի փոխադրում՝ հացահատիկի խմբաքանակի տեղափոխում դրա շրջանառության ժամանակ, սննդային նպատակները՝ հացահատիկի օգտագործումը սննդամթերքի վերամշակման համար,

մատակարարվող հացահատիկ՝ հացահատիկ, որն անցել է մշակում եւ ուղղվում է սննդային կամ կերային նպատակների,

հացահատիկի կողմնակի հոտ՝ հացահատիկի տվյալ անվանմանը (տեսակին) ոչ բնորոշ հոտ, որն առաջանում է հացահատիկի կողմից սուր հոտ արձակող կողմնակի նյութերի կլանման հետեւանքով,

հացահատիկի արտադրություն՝ հացահատիկի աճեցմանն ուղղված ագրոտեխնոլոգիական միջոցառումների համալիր,

վարդագույն ներկված հացահատիկ՝ լիքը, փայլուն հացահատիկ՝ հիմնականում սաղմի մասում թաղանթների վարդագույն պիգմենտացիայով,

հասկաժանգ՝ մուգ մանուշակագույն հասկում երկարացված խիտ գոյացությունների տեսքով *Claviceps purpurea* սնկով ախտահարված հացահատիկ,

հացահատիկի չորացում՝ հացահատիկի խոնավության նվազեցում՝ դրա անվտանգությունն ապահովելու նպատակով,

Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմին՝ Մաքսային միության անդամ պետության՝ լիազորություններով օժտված պետական մարմին, որն իրականացնում է պետական հսկողություն (վերահսկողություն) սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ,

հացահատիկի ուտիլիզացիա՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող հացահատիկի օգտագործումն այնպիսի նպատակներով, որոնք տարբերվում են հացահատիկի համար նախատեսված եւ սովորաբար օգտագործվող նպատակներից, կամ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող հացահատիկի վիճակի այնպիսի փոփոխություն, որը պիտանի չէ դրա ցանկացած օգտագործման կամ կիրառման համար, ինչպես նաեւ բացառում է դրա անբարենպաստ ազդեցությունը մարդու, կենդանիների, բույսերի եւ շրջակա միջավայրի վրա,

Ֆուզարիոզ հատիկ՝ հասունացման ընթացքում ֆուզարիում ցեղի սնկերով ախտահարված հատիկ (վտիտ, թեթեւ, խորշոմած, սպիտակավուն, երբեմն նարնջավարդագույն բծերով),

հացահատիկի պահում՝ հացահատիկի անվտանգությունն ապահովելու համար հացահատիկի պահման շտեմարանում պայմանների ստեղծման տեխնոլոգիական գործընթաց,

հացահատիկի փորձաքննություն՝ հացահատիկի անվտանգության ցուցանիշների որոշում՝ դրա ուտիլիզացման հնարավորության վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

Հոդված 3. Շուկայում հացահատիկը շրջանառության մեջ դնելու կանոնները

1. Մենդային եւ կերային նպատակներով մատակարարվող հացահատիկը Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ է դրվում այն պայմանով, որ այն անցել է սույն Տեխնիկական կանոնակարգով, ինչպես նաեւ Մաքսային միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերով սահմանված համապատասխանության գնահատման (հավաստման) համար անհրաժեշտ գործընթացները, որոնց գործողությունը տարածվում է հացահատիկի վրա:

2. Մատակարարվող հացահատիկի յուրաքանչյուր խմբաքանակ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելու դեպքում ուղեկցվում է ապրանքաուղեկից փաստաթղթերով, որոնք պետք է պարունակեն տեղեկատվություն սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հացահատիկի խմբաքանակի համապատասխանության մասին հայտարարագրի վերաբերյալ:

Պահպանման եւ (կամ) մշակման նպատակով արտադրող երկրի տարածք ուղարկելու համար նախատեսված հացահատիկը Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելու դեպքում այն առանց հայտարարագրի վերաբերյալ տեղեկատվության ուղեկցվում է ապրանքաուղեկից փաստաթղթերով:

3. Մատակարարվող հացահատիկը, որի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հավաստված չէ, չի կարող մականշվել Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի

շրջանառության միասնական նշանով, եւ չի թույլատրվում Մաքսային միության միասնական մաքսային տարածքում դրա շրջանառությունը:

Հոդված 4. Անվտանգության պահանջները

1. Սննդային նպատակներով մատակարարվող հացահատիկի մեջ թունավոր տարրերի, միկրոտոքսինների, բենզապիրենի, թունաքիմիկատների, ռադիոնուկլիդների, վնասատուներով վարակվածության եւ վնասակար խառնուկների ցուցանիշները չպետք է գերազանցեն սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ, 3-րդ հավելվածներում նշված սահմանային թույլատրելի մակարդակները:

2. Կերային նպատակներով մատակարարվող հացահատիկի մեջ թունավոր տարրերի, միկրոտոքսինների, թունաքիմիկատների, ռադիոնուկլիդների, վնասատուներով վարակվածության եւ վնասակար խառնուկների ցուցանիշները չպետք է գերազանցեն սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ, 5-րդ հավելվածներում նշված սահմանային թույլատրելի մակարդակները:

3. Թունաքիմիկատների մնացորդային քանակությունների որոշումը, բացառությամբ սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ, 4-րդ հավելվածներում նշված թունաքիմիկատների, կատարվում է դրանց կիրառման վերաբերյալ տեղեկատվության հիման վրա, որը տրամադրվում է հացահատիկն արտադրողի (մատակարարի) կողմից Մաքսային միության միասնական մաքսային տարածքում այն շրջանառության մեջ դնելիս: Հացահատիկի մեջ դրանց պարունակության ցուցանիշները չպետք է գերազանցեն սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հավելվածում նշված սահմանային թույլատրելի մակարդակները:

4. Չի թույլատրվում Մաքսային միության միասնական մաքսային տարածքում հացահատիկը շրջանառության մեջ դնելը, եթե դրանում Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված

եւ սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ, 4-րդ, 6-րդ հավելվածներում նշված թունաքիմիկատների ազդող նյութերի մնացորդային քանակների պարունակությունը գերազանցում է թույլատրելի մակարդակները:

5. Հացահատիկի արտադրության ժամանակ օգտագործվող պարարտանյութերը պետք է համապատասխանեն Մաքսային միության օրենսդրության պահանջներին, իսկ մինչ Մաքսային միության համապատասխան տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելը՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրության պահանջներին:

6. Հացահատիկը պահվում է հացահատիկի անվտանգությունը եւ դրա սպառողական հատկությունների պահպանվածությունն ապահովող հացահատիկի պահման շտեմարաններում՝ պահպանելով սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված՝ հացահատիկի պահման գործընթացներին ներկայացվող պահանջները, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետության ազգային օրենսդրությամբ սահմանված պահման պայմանները:

7. Արտադրական տարածքների, ինչպես նաեւ սիլոսների եւ բունկերների պատերի, առաստաղների, կրող կոնստրուկցիաների, դռների, հատակների մակերեսները պետք է հասանելի լինեն մաքրման եւ վարակազերծման համար: Հացահատիկի պահման շտեմարանների տանիքի եւ պատերի վիճակը, ակտիվ օդափոխության ուղիների մուտքային անցքերի կառուցվածքները պետք է ապահովեն մթնոլորտային տեղումների եւ կողմնակի իրերի ներթափանցման կանխումը:

8. Հացահատիկի պահման շտեմարաններում հացահատիկի մշակման տեխնոլոգիական գործընթացը պետք է ապահովի հացահատիկի այն աստիճանի չորացումը, մաքրումը եւ վարակազերծումը, որը կապահովի պահպանման համար անվտանգ եւ կայուն վիճակ:

9. Հացահատիկի պահման շտեմարաններում թույլ չի տրվում հացահատիկի հետ միասին պահել թունավոր, դյուրավառ քիմիական նյութեր,

վառելիքաքսուքային նյութեր եւ նավթամթերքներ, ինչպես նաեւ այլ տեսակի սննդամթերք եւ ոչ սննդային արտադրանք, եթե դա կարող է հանգեցնել հացահատիկի աղտոտմանը:

10. Վնասատուների կողմից վարակված հացահատիկի վարակազերծման գործընթացը պետք է ապահովի հացահատիկի անվտանգությունը՝ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան:

11. Հացահատիկի պահման շտեմարաններում հացահատիկի պահման ողջ ժամանակահատվածի ընթացքում պետք է կազմակերպվի պահման պայմանների (խոնավություն, ջերմաստիճան), ինչպես նաեւ վնասատուներով վարակվածության, հացահատիկի գույնի եւ կողմնակի հոտի առկայության ցուցանիշների ստուգում:

12. Հացահատիկի պահման շտեմարաններում հացահատիկի պահման ժամանակ պետք է ապահովվեն հացահատիկի ինքնաբոցավառումը բացառող, ինչպես նաեւ պայթյունա- եւ հրդեհաանվտանգությունն ապահովող պայմաններ:

13. Հացահատիկի փոխադրումն իրականացվում է փոխադրման ժամանակ հացահատիկի անվտանգությունն ու պահպանվածությունն ապահովող տրանսպորտային միջոցներով:

14. Տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների եւ կոնտեյներների կառուցվածքը պետք է ապահովի հացահատիկի պաշտպանությունն աղտոտվածությունից, խոչընդոտի հացահատիկի թափվելը, կենդանիների, այդ թվում՝ կրծողների եւ միջատների մուտքը, ինչպես նաեւ ապահովի մաքրման եւ (կամ) լվացման, եւ (կամ) ախտահանման, եւ (կամ) միջատազերծման (դեզինսեկցիայի), եւ (կամ) կրծողազերծման (դեռատիզացիայի) իրականացումը:

15. Տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքները եւ կոնտեյներները չպետք է հացահատիկի աղտոտման աղբյուր լինեն:

16. Հացահատիկը փոխադրվում է առանց տարայի, տրանսպորտային տարայով կամ սպառողական փաթեթվածքով:

Առանց տարայի փոխադրվող հացահատիկը պետք է ուղեկցվի վերջինիս հետագծելիությունն ապահովող ապրանքաուղեկից փաստաթղթերով, որոնք պարունակում են տեղեկատվություն հետեւյալի մասին.

1) հացահատիկի տեսակի, բերքահավաքի տարեթվի, ծագման վայրի, հացահատիկի նշանակության (սննդային կամ կերային նպատակներով, պահման եւ (կամ) մշակման, արտահանման համար),

2) հացահատիկի քանակության՝ արտահայտված զանգվածի միավորներով,

3) հայտատուի անվանման եւ գտնվելու վայրի,

4) հացահատիկի մեջ գենետիկորեն ձեւափոխված (տրանսգենային) օրգանիզմների (այսուհետ՝ ԳՁՕ) առկայության մասին, այն դեպքում, երբ նշված օրգանիզմների պարունակությունը հացահատիկի մեջ կազմում է 0,9 տոկոսից ավելին:

ԳՁՕ կիրառմամբ ստացված հացահատիկի համար պետք է ներկայացվի հետեւյալ տեղեկատվությունը. «գենետիկորեն ձեւափոխված հացահատիկ» կամ «գենո-ձեւափոխված օրգանիզմների կիրառմամբ ստացված հացահատիկ» կամ «հացահատիկը պարունակում է գենո-ձեւափոխված օրգանիզմների բաղադրիչներ»՝ նշելով տրանսֆորմացիոն իրադարձության եզակի նույնացուցիչը:

Սպառողական փաթեթվածքում փաթեթավորված հացահատիկի (կերային նպատակներով հացահատիկ) եւ տրանսպորտային տարայում հացահատիկի մակնշումը պետք է պարունակի սույն կետի 1-4-րդ ենթակետերում նշված տեղեկատվությունը, ինչպես նաեւ հացահատիկի պիտանելիության ժամկետի եւ պահման պայմանների մասին տեղեկատվությունը (կերային նպատակների համար նախատեսված եւ սպառողական փաթեթվածքում փաթեթավորված հացահատիկի համար):

Թույլատրվում է հացահատիկի մակնշումը լրացնել հետևյալ գրությամբ. «Պիտանիության ժամկետը սահմանափակված չէ՝ պահման պայմաններին հետևելու դեպքում»:

Տրանսպորտային տարայում տեղադրված հացահատիկի եւ (կամ) սպառողական փաթեթվածքում փաթեթավորված հացահատիկի մակնշումը պետք է լինի ռուսերենով: Թույլատրվում է մակնշման զետեղումը Մաքսային միության անդամ պետության պետական լեզվով (լեզուներով):

Մաքսային միության միասնական մաքսային տարածքի սահմաններից դուրս գտնվող՝ հացահատիկն արտադրողի գտնվելու վայրի անվանման մասին տեղեկատվությունը թույլատրվում է նշել լատինական այբուբենի տառերով եւ արաբական թվերով կամ հացահատիկն արտադրողի գտնվելու վայրի երկրի պետական լեզվով (լեզուներով)՝ երկրի անվանումը ռուսերենով նշելու պայմանով:

Մակնշման մեջ նշված՝ ձեռքբերողի (սպառողի) համար նախատեսված տեղեկատվությունը պետք է լինի հասկանալի, դյուրընթեռնելի, հավաստի եւ նրան չզցցի մոլորության մեջ: Գրությունները, նշանները, պայմանական նշանները պետք է կոնտրաստային լինեն այն ֆոնի հետ, որոնց վրա զետեղված է մակնշումը:

Սպառողական փաթեթվածքում փաթեթավորված հացահատիկի (կերային նպատակներով հացահատիկ) մակնշումը պետք է զետեղվի սպառողական փաթեթվածքի եւ (կամ) պիտակի, եւ (կամ) հակադարձ պիտակի վրա, եւ (կամ) յուրաքանչյուր փաթեթավորման միավորում տեղադրվող կամ յուրաքանչյուր փաթեթավորման միավորին կցվող ներդիր-թերթիկի վրա:

Անմիջապես տրանսպորտային տարայում տեղադրված հացահատիկի մակնշումը պետք է զետեղվի տրանսպորտային տարայի եւ (կամ) պիտակի, եւ (կամ) հակադարձ պիտակի վրա, եւ (կամ) յուրաքանչյուր տրանսպորտային տարայում տեղադրվող կամ յուրաքանչյուր տրանսպորտային տարային կցվող ներդիր-թերթիկի վրա, կամ ապրանքաուղեկից փաստաթղթերում:

Փաթեթվորումը պետք է համապատասխանի «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

17. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող հացահատիկի մատակարարվող խմբաքանակը ենթակա է վերադարձման կամ ուտիլիզացման:

Մաքսային միության այն անդամ պետության լիազորված մարմինը, որի տարածքում հայտնաբերվել է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող հացահատիկ, որոշում է կայացնում հացահատիկի փորձաքննություն անցկացնելու վերաբերյալ եւ ձեւավորում է լիազորված մարմնի, հացահատիկ արտադրողի (սեփականատիրոջ) եւ ստացողի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով, որն ընտրում է նմուշը, եւ այն ուղարկում Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)՝ փորձարկումներ անցկացնելու համար: Հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) ընտրությունն իրականացվում է հանձնաժողովի կողմից:

18. Փորձաքննության անցկացման եւ հացահատիկի վերադարձման կամ ուտիլիզացման վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ ժամանակահատվածի ընթացքում հացահատիկը ենթակա է պահման առանձին շինություններում՝ նշելով խմբաքանակի ծավալը եւ պահպանելով հացահատիկի մուտքը, ինչպես նաեւ վնասատուներով դրա ախտահարումն ու վարակվածությունը բացառող պայմանները:

19. Փորձարկումների արդյունքների հիման վրա հանձնաժողովը հացահատիկի վերադարձման կամ ուտիլիզացման վերաբերյալ որոշում է կայացնում:

20. Հացահատիկի վերադարձը եւ ուտիլիզացումն իրականացվում են Մաքսային միության անդամ պետության ազգային էկոլոգիական օրենսդրությանը եւ բույսերի կարանտինի ոլորտին առնչվող ազգային օրենսդրության պահանջներին համապատասխան:

21. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող հացահատիկի ուտիլիզացման դեպքում արտադրողը (սեփականատերը) պարտավոր է Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմին ներկայացնել նման հացահատիկի ուտիլիզացումը հավաստող փաստաթուղթ՝ Մաքսային միության անդամ պետության ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 5. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովումը

1. Հացահատիկի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգին ապահովվում է դրա պահանջների կատարմամբ եւ Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարմամբ, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա:

Հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների մեթոդները սահմանվում են Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատվող՝ Ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներով, որոնք պարունակում են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման ու կատարման եւ արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) համար անհրաժեշտ նմուշառման կանոնները:

Հոդված 6. Համապատասխանության գնահատումը

1. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մատակարարվող հացահատիկի համապատասխանության գնահատումն անցկացվում է հետևյալ ձեւերով՝

1) հացահատիկի համապատասխանության հավաստում (հայտարարագրում),

2) պետական հսկողություն (վերահսկողություն) սույն Տեխնիկական կանոնակարգի՝ հացահատիկին եւ դրան ներկայացվող պահանջների հետ կապված՝ հացահատիկի արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող պահանջները պահպանելու նկատմամբ:

Հոդված 7. Համապատասխանության հավաստում

1. Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող, սննդային եւ կերային նպատակներով մատակարարվող հացահատիկը ենթակա է համապատասխանության հավաստման՝ համապատասխանության հայտարարագրման ձեւով:

Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող, արտադրող երկրի տարածք պահպանման եւ (կամ) մշակման համար ուղարկվող հացահատիկը համապատասխանության հավաստման ենթակա չէ:

2. Մաքսային միության միասնական մաքսային տարածքում արտադրված հացահատիկի եւ Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծվող հացահատիկի համապատասխանության հավաստումն անցկացվում է սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված միասնական կանոններով եւ սխեմաներով:

3. Համապատասխանությունը հայտարարագրելիս որպես հայտատու կարող է հանդես գալ Մաքսային միության անդամ պետության տարածքում դրա

ազգային օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձը, որը կամ արտադրողն է կամ վաճառողը, կամ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող հացահատիկի համապատասխանությունն ապահովելու եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող հացահատիկի անհամապատասխանության համար պատասխանատվության մասով նրա հետ կնքված պայմանագրի հիման վրա օտարերկրյա արտադրողի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձը (օտարերկրյա արտադրողի գործառույթներ իրականացնող անձ):

4. Հայտարարագրման սխեմայից կախված՝ համապատասխանության հայտարարագրման ձեռով համապատասխանության հավաստումն իրականացվում է սեփական ապացույցների եւ (կամ) հետեյալ երրորդ կողմի մասնակցությամբ ստացված ապացույցների հիման վրա՝ արտադրանքի սերտիֆիկացման մարմին, Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված կառավարման համակարգերի հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի սերտիֆիկացման մարմին:

5. Հացահատիկի համապատասխանության հայտարարագրումն իրականացվում է 1h, 2h, 3h, 4h եւ 6h սխեմաներով:

Համապատասխանությունն ըստ 1h, 3h, 6h սխեմաների հայտարարագրելիս որպես հայտատու կարող է հանդես գալ Մաքսային միության անդամ պետության տարածքում դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ արտադրող հանդիսացող կամ օտարերկրյա արտադրողի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձը:

Համապատասխանությունն ըստ 2h, 4h սխեմաների հայտարարագրելիս որպես հայտատու կարող է հանդես գալ Մաքսային միության անդամ պետության

տարածքում դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ արտադրող կամ վաճառող հանդիսացող, կամ օտարերկրյա արտադրողի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձը:

6. 1h հայտարարագրման սխեման ներառում է հետևյալ ընթացակարգերը՝
- տեխնիկական փաստաթղթերի կազմում եւ վերլուծություն,
 - արտադրական հսկողության իրականացում,
 - հացահատիկի նմուշների փորձարկումների անցկացում,
 - համապատասխանության հայտարարագրի ընդունում ու գրանցում,
 - շրջանառության միասնական նշանի զետեղում:

Հայտատուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ արտադրության գործընթացը կայունացնելու եւ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հացահատիկի համապատասխանությունն ապահովելու համար, կազմում է տեխնիկական փաստաթղթերը ու կատարում դրանց վերլուծությունը:

Հայտատուն ապահովում է արտադրական հսկողության իրականացումը:

Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հացահատիկի համապատասխանությունը հսկելու նպատակով հայտատուն անցկացնում է հացահատիկի նմուշների փորձարկումներ: Հացահատիկի նմուշների փորձարկումներն անցկացվում են հայտատուի ընտրությամբ փորձարկման լաբորատորիայում կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում:

Հայտատուն ձեւակերպում է համապատասխանության հայտարարագիրը եւ այն գրանցում ծանուցման սկզբունքով՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

Սերիական թողարկման հացահատիկի համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը՝ 3 տարուց ոչ ավելի:

7. 2h հայտարարագրման սխեման ներառում է հետևյալ ընթացակարգերը՝

- տեխնիկական փաստաթղթերի կազմում եւ վերլուծություն,
- հացահատիկի նմուշների փորձարկումների անցկացում,
- համապատասխանության հայտարարագրի ընդունում ու գրանցում,
- շրջանառության միասնական նշանի զետեղում:

Հայտատուն կազմում է տեխնիկական փաստաթղթերը եւ կատարում դրանց վերլուծությունը:

Հայտատուն անցկացնում է հացահատիկի նմուշների փորձարկումներ՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հացահատիկի խմբաքանակի հայտարարված համապատասխանության հավաստումն ապահովելու համար: Հացահատիկի նմուշների փորձարկումներն անցկացվում են հայտատուի ընտրությամբ փորձարկման լաբորատորիայի կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի կողմից, որն ընդգրկված է Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում:

Մաքսային միության Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով՝ հայտատուն ձեւակերպում է համապատասխանության հայտարարագիրը եւ այն գրանցում ծանուցման սկզբունքով:

Հացահատիկի խմբաքանակի համար համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը՝ հայտատուի ընտրությամբ:

8. 3h հայտարարագրման սխեման ներառում է հետևյալ ընթացակարգերը՝

- տեխնիկական փաստաթղթերի կազմում եւ վերլուծություն,
- արտադրական հսկողության իրականացում,
- հացահատիկի նմուշների փորձարկումների անցկացում,
- համապատասխանության հայտարարագրի ընդունում ու գրանցում,

- շրջանառության միասնական նշանի զետեղում:

Հայտատուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ արտադրության գործընթացը կայունացնելու եւ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հացահատիկի համապատասխանությունն ապահովելու համար, կազմում է տեխնիկական փաստաթղթերն ու կատարում դրանց վերլուծությունը:

Հայտատուն ապահովում է արտադրական հսկողության իրականացումը:

Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հացահատիկի համապատասխանությունը հսկելու նպատակով հայտատուն անցկացնում է հացահատիկի նմուշների փորձարկումներ: Հացահատիկի նմուշների փորձարկումներն անցկացվում են հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի կողմից, որն ընդգրկված է Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում:

Հայտատուն ձեւակերպում է համապատասխանության հայտարարագիրը եւ այն գրանցում ծանուցման սկզբունքով՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից սահմանված կարգով :

Սերիական թողարկման հացահատիկի համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը՝ 3 տարուց ոչ ավելի:

9. 4h հայտարարագրման սխեման ներառում է հետեւյալ ընթացակարգերը՝
 - տեխնիկական փաստաթղթերի կազմում եւ վերլուծություն,
 - հացահատիկի նմուշների փորձարկումների անցկացում,
 - համապատասխանության հայտարարագրի ընդունում ու գրանցում,
 - շրջանառության միասնական նշանի զետեղում:

Հայտատուն կազմում է տեխնիկական փաստաթղթերը եւ կատարում դրանց վերլուծությունը:

Հայտատուն անցկացնում է հացահատիկի նմուշների փորձարկումներ՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հացահատիկի խմբաքանակի հայտագրված համապատասխանության հավաստումն ապահովելու համար: Հացահատիկի նմուշների փորձարկումներն անցկացվում են հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի կողմից, որն ընդգրկված է Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում:

Հայտատուն ձեւակերպում է համապատասխանության հայտարարագիրը, եւ այն գրանցում ծանուցման սկզբունքով՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից սահմանված կարգով :

Խմբաքանակի համար համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը՝ հայտատուի ընտրությամբ:

10. 6h հայտարարագրման սխեման ներառում է հետեւյալ ընթացակարգերը՝

- այն տեխնիկական փաստաթղթերի կազմումը եւ վերլուծությունը, որոնց կազմում պարտադիր ընդգրկվում է կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից կառավարման համակարգի համար տրված սերտիֆիկատը (սերտիֆիկատի պատճենը),

- արտադրական հսկողության իրականացում,
- հացահատիկի նմուշների փորձարկումների անցկացում,
- համապատասխանության հայտարարագրի ընդունում ու գրանցում,
- շրջանառության միասնական նշանի զետեղում,
- կառավարման համակարգի գործունեության կայունության նկատմամբ հսկողություն:

Հայտատուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կառավարման համակարգերի գործունեության կայունությունը եւ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող հացահատիկի

արտադրության պայմաններն ապահովելու համար, կազմում է տեխնիկական փաստաթղթերն ու կատարում դրանց վերլուծությունը:

Հայտատուն ապահովում է արտադրական հսկողության իրականացումը եւ ծրագրված բոլոր փոփոխությունների մասին տեղեկացնում է կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնին:

Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հացահատիկի համապատասխանությունը հսկելու նպատակով՝ հայտատուն անցկացնում է հացահատիկի նմուշների փորձարկումներ:

Արտադրանքի նմուշների փորձարկումներն անցկացվում են հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում:

Հայտատուն ձեակերպում է համապատասխանության հայտարարագիրը եւ այն գրանցում ծանուցման սկզբունքով՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից սահմանված կարգով :

Կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինը կառավարման սերտիֆիկացված համակարգի գործունեության նկատմամբ իրականացնում է տեսչական վերահսկողություն :

Տեսչական վերահսկողության բացասական արդյունքների դեպքում հայտատուն ընդունում է հետեւյալ որոշումներից որեւէ մեկը՝

- կասեցնում է համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը,

- չեղարկում է համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը:

Միասնական ձեւով ձեակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրում հայտատուի կողմից կատարվում է համապատասխան գրառում:

Սերիական թողարկման հացահատիկի համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը՝ 5 տարուց ոչ ավելի:

11. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հացահատիկի համապատասխանությունը հավաստող տեխնիկական փաստաթղթերը կարող են ներառել՝

հայտատուի եւ (կամ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից անցկացված փորձարկումների արձանագրությունները, որոնցով հավաստվում է հացահատիկի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին,

հացահատիկի անվտանգությունը հավաստող փաստաթղթերը՝ Մաքսային միության եւ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրական ակտերին համապատասխան,

կառավարման համակարգերի համար համապատասխանության սերտիֆիկատները,

հացահատիկի անվտանգությունը հավաստող այլ փաստաթղթեր:

12. Համապատասխանության հայտարարագիրը ձեւակերպվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատված միասնական ձեւով:

13. Համապատասխանության հայտարարագիրը ենթակա է վերաձեւակերպման հետեւյալ դեպքերում՝

սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների փոփոխություն,

փոփոխություն տեխնիկական փաստաթղթերի կազմի կամ արտադրության տեխնոլոգիական գործընթացի եւ (կամ) պահման մեջ, որոնք ազդել են կամ կարող են ազդել սահմանված պահանջներին հացահատիկի համապատասխանության վրա:

Համապատասխանության հայտարարագրի վերաձեւակերպումն իրականացվում է դրա ընդունման կարգով:

14. Տեխնիկական փաստաթղթերը, այդ թվում՝ Մաքսային միության անդամ պետությունների տարածքում համապատասխանության հավաստման փաստաթղթերը, պետք է պահվեն՝

1) սերիական թողարկման հացահատիկի համար՝ հայտատուի մոտ՝ հացահատիկը արտադրությունից հանելու (արտադրությունը դադարեցնելու) օրվանից առնվազն 10 տարվա ընթացքում,

2) հացահատիկի խմբաքանակի համար՝ հայտատուի մոտ՝ հացահատիկի խմբաքանակն իրացնելու օրվանից առնվազն 10 տարվա ընթացքում:

Կառավարման համակարգի սերտիֆիկացման արդյունքները հավաստող ապացուցողական նյութերը պահվում են կառավարման համակարգերի սերտիֆիկացման այն մարմնում, որը տրամադրել է համապատասխանության սերտիֆիկատը՝ կառավարման համակարգի համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտից հետո առնվազն 5 տարվա ընթացքում:

Վերը նշված փաստաթղթերը պետք է տրամադրվեն պետական հսկողության (վերահսկողության) մարմիններին՝ նրանց պահանջով:

15. Սույն Տեխնիկական կանոնակարգի՝ հացահատիկին եւ դրան ներկայացվող պահանջների հետ կապված՝ հացահատիկի արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է Մաքսային միության անդամ պետության ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 8. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը

1. Անվտանգության պահանջներին համապատասխանող եւ սույն Տեխնիկական կանոնակարգի 7-րդ հոդվածի համաձայն համապատասխանության

հավաստման ընթացակարգն անցած հացահատիկը պետք է մակնշվի Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով:

Հացահատիկը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշվում է, եթե այն համապատասխանում է սույն Տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաև Մաքսային միության տեխնիկական այն կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա:

2. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է փաթեթվածքի կամ կցվող փաստաթղթերի վրա՝ հացահատիկը առանց փաթեթվածքի փոխադրելու դեպքում:

Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է ցանկացած եղանակով, որով հացահատիկի պիտանիության ամբողջ ժամկետի ընթացքում ապահովվում է հստակ եւ պարզ պատկերը:

3. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումն իրականացվում է նախքան Մաքսային միության միասնական մաքսային տարածքում հացահատիկը շրջանառության մեջ դնելը:

Հոդված 9. Պաշտպանության մասով վերապահումը

1. Մաքսային միության անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող մատակարարվող հացահատիկը Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելը սահմանափակելու, արգելելու, ինչպես նաև այդ հացահատիկը շուկայից հանելու համար:

2. Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմինը պարտավոր է Մաքսային միության հանձնաժողովին եւ Մաքսային միության մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին ծանուցել ընդունված որոշման մասին՝ նշելով տվյալ որոշումն ընդունելու պատճառները եւ տրամադրելով տվյալ միջոցը ձեռնարկելու անհրաժեշտությունը պարզաբանող ապացույցներ:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ընդունված որոշման հետ Մաքսային միության մյուս անդամ պետությունների լիազորված մարմինների անհամաձայնության դեպքում Մաքսային միության բոլոր անդամ պետությունների լիազորված մարմիններն անցկացնում են խորհրդակցություններ՝ փոխադարձ ընդունելի որոշում կայացնելու նպատակով:

**Հացահատիկային, հացահատիկալոռային եւ յուղատու մշակաբույսերի
հատիկների նույնականացման ժամանակ կիրառվող տարբերակիչ
հատկանիշները**

Հացահատիկի անվանումը	Հատկանիշները
Փափուկ ցորեն	Հատիկը ձվաձեւ է, կարճ, կլորավուն, կարմրաշագանակագույնից մինչեւ բաց դեղին է, քիստը լավ տարբերակելի է, հատիկը խորը ակոսիկի հաշվին ունի բազմանկյան տեսք, էնդոսպերմը տարբեր է լինում (այլուրավոր կամ ապակենման), ունի կոլոթիկ, չափսերը. հաստությունը՝ 1,4-3,1, լայնությունը՝ 1,4-3,8, երկարությունը՝ 4,6-7,0 մմ:
Կարծր ցորեն	Հատիկը երկարավուն է, լայնակի կտրվածքում անկյուն տված, միջին չափի, ավելի հաճախ՝ խոշոր, գույնը տատանվում է բացից մինչեւ մուգ սաթագույնը, քիստը թույլ զարգացած է, հազիվ նշմարելի, էնդոսպերմը՝ ապակենման, ունի բաց ակոսիկ, չափսերը. հաստությունը՝ 1,5-3,3, լայնությունը՝ 1,6-4,0, երկարությունը՝ 4,8-8,0 մմ:
Աշորա	Հատիկը ավելի երկար ու բարակ է, գույնը՝ մոխրականաչ, ունի սաղմնային սուր արմատիկ, խորը քիստ, սերմնապտղի մակերեսույթը խորշոմավոր է, հատիկի բութ ծայրին առկա է հազիվ նշմարելի ակոսիկ, չափսերը. հաստությունը՝ 1,5-3,1, լայնությունը՝ 1,5-3,5, երկարությունը՝ 5,0-10,0 մմ:
Գարի	Հատիկը թաղանթավոր է, թեփուկների հետ սերտաճած, հազվադեպ է մերկ լինում, էլիպսաձեւ է, երկարավուն, սրածայր, սերմնապտուղի մակերեսույթը հարթ է, դեղին է՝ կանաչ երանգներով, առանց ակոսիկի, չափսերը. հաստությունը՝ 1,4-4,5, լայնությունը՝ 2,0-5,0, երկարությունը՝ 7,0-14,6 մմ:
Վարսակ	Հատիկը թաղանթավոր է, թեփուկների հետ չսերտաճած, ձվաձեւ-երկարավուն, գազաթում նեղացող, սպիտակ կամ դեղին, ամբողջ մակերեսույթը ծածկված է մազմզուկներով, ունի ակոսիկ, չափսերը. հաստությունը՝ 1,2-3,6, լայնությունը՝ 1,4-4,0, երկարությունը՝ 8,0-16,6 մմ:
Եգիպտացորեն	Իր չափսերով, կազմությամբ, ձեւով ու երանգով եգիպտացորենի հատիկը բավական բազմազան է լինում՝ ատամնավոր, կիսաապակենման, կարծր, գրեթե ամբողջությամբ ապակենման,

	ձվածեւ, կլորավուն, այլորավոր, պայթող, լինում է սպիտակ, դեղին, կարմրավուն շագանակագույն, սերմնապտղի մակերեսույթը հարթ է կամ խորշոմավոր առանց ակոսիկի, չափսերը. հաստությունը՝ 2,5-8,0, լայնությունը՝ 5,0-11,5, երկարությունը՝ 5,5-13,5 մմ:
Կորեկ	Հատիկը թաղանթավոր է, կլորավուն, լինում է կրեմագույն, դեղին, կարմիր, շագանակագույն, սերմնապտղի մակերեսույթը հարթ է, ողորկ, չափսերը. հաստությունը՝ 1,0-2,2, լայնությունը՝ 1,2-3,0, երկարությունը՝ 1,8-3,2 մմ:
Բրինձ	Հատիկը թաղանթավոր է, երկարավուն-ձվածեւ, սերմնապտղի մակերեսույթը երկայնական-կողավոր, լինում է սպիտակ, ծղոտադեղին, շագանակագույն, չունի ակոսիկ եւ քիստ, չափսերը. հաստությունը՝ 1,2-2,8, լայնությունը՝ 2,5-4,3, երկարությունը՝ 5,0-12,0 մմ:
Հնդկացորեն	Հատիկը թաղանթավոր է, եռանիստ, մուգ շագանակագույն է, չափսերը. հաստությունը՝ 2,0-4,2, երկարությունը՝ 5,0-7,0 մմ:
Սորգո	Հատիկը թաղանթավոր է կամ մերկ, կլորավուն, սերմնապտղի մակերեսույթը հարթ, փայլուն, լինում է սպիտակ, կրեմագույն, կարմիր, շագանակագույն, չափսերը. հաստությունը՝ 1,0-2,3, լայնությունը՝ 1,4-3,5, երկարությունը՝ 1,8-3,3 մմ:
